ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ե.Կիրակոսյանին 2014 թ. փետրվարի 3–ից 7-ը Նյու Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձը՝ Եղիշե Կիրակոսյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Նյու Յորք, 3–7–ը փետրվարի 2014թ.:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով:

Գործուղման նպատակը՝ աշխատանքային այց:

Քննարկված թեմաները՝ արբիտրաժ և միջնորդ հաշտարարություն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (Հանձնաժողով) Արբիտրաժի և միջնորդ հաշտարարության աշխատանքային երկրորդ խմբի 60–րդ նստաշրջանի հիմնական մանդատն էր քննարկել և վերջնական տեսքի բերել ներդրումային վեճերի արբիտրաժի ժամանակ թափանցիկության նոր կանոններն ամրագրող կոնվենցիայի նախագիծը: Աշխատանքային խմբում, որի հիմնական զեկուցողը Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պարոն Կիրակոսյանն էր, ի թիվս այլ պետությունների, ներկայացված էին Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադան, Չինաստանը, Ճապոնիան, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսիան, Ուկրաինան, Իրանը, Իսրայելը, ինչպես նաև Եվրոպական Միությունն ու միջազգային մի շաք կազմակերպությունների մասնագիտացված մարմիններ: Աշխատանքային խմբի նիստն անցկացվեց մասնակիցների միջև հինգ օր տևողությամբ բուռն քննարկումներով, որի արդյունքում նախագծի շուրջ կայացած քննարկումների և փոխադարձաբար համաձայնեցված որոշումների ամփոփմամբ կազմված զեկույցը փոխանցվեց Հանձնաժողովի

քարտուղարությանը: Քարտուղարությունը տեքստն ըստ Աշխատանքային խմբի ներկայացրած զեկույցի հիման վրա, ինչպես նաև լեզվային և խմբագրական առումով հղկելուց հետո, կներկայացնի Հանձնաժողովի անդամ պետությունների կառավարությունների կարծիքին, որից հետո Կոնվենցիայի վերջնական նախագիծը կդրվի Հանձնաժողովի հաստատմանը:

Հանձնաժողովի Աշխատանքային խմբում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասնակցությունն արդյունավետ էր ոչ միայն Կոնվենցիայի նախագծման գործընթացում, այլև մի շարք պետությունների մասնագիտական բարձր որակավորում ունեցող փորձագետների հետ փորձի փոխանակման, տեղեկատվության հավաքագրման և խնդրո առարկա ոլորտի զարգացմանն ուղղված հետագա ծրագրերի նախագծման համար:

Արբիտրաժի և միջնորդ հաշտարարության աշխատանքային խմբերի նիստերին մասնակցությունը հատկապես կարևորվում է այն հանգամանքով, որ ՀՀ արդարադատության նախարարությունը այս պահին ձեռնամուխ է եղել արբիտրաժի և միջնորդ հաշտարարության խթանման, ինչպես նաև այդ ոլորտում օրենսդրական և այլ հիմնարար բարեփոխումների իրականացմանը: Չափազանց կարևորվում է ՀՀ հետագա ակտիվ մասնակցությունն այս նիստերին՝ փորձի փոխանակման, ինչպես նաև արբիտրաժի և միջնորդ հաշտարարությանն առնչվող հարցերի առնչությամբ միջազգային արդի մոտեցումների, լուծումների իմացության և միջազգային գործընթացներում անմիջական մասնակցության տեսանկյունից: